

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

ԱՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության 2019թ. կատարած աշխատանքների մասին

Նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից 2019թ. լրիվ կամ մասնակի ստուգումներ է իրականացվել հանրապետության տարածքում գործող 98 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 14 բյուջետային հիմնարկներում, 50 պետական և 1 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, 22 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 3 հիմնադրամներում, 2 հասարակական կազմակերպություններում, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, 1 անհատ ձեռնարկատիրոջ և 3 քաղաքային համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 371525.5 հազ.դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- բյուջե պակաս հաշվարկված գումարներ՝ 929.5 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե,

- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 14741.1 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 13309.3 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 1431.8 հազ.դրամ,

- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 30126.7 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 15066.6 հազ.դրամ, համայնքային բյուջե 134.7 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին 14.9 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 14910.5 հազ.դրամ,

- նախահաշիվներով ավելի նախատեսված գումարներ՝ 5130.3 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 4824.3 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 306.0 հազ.դրամ,

- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 210543.3 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 36.7 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 210506.6 հազ.դրամ,

- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 12668.3 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման պետական բյուջե,

- նորմերի խախտումներ՝ 37998.8 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 29824.3 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 5883.8 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին 55.7 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 2235.0 հազ.դրամ,

- գերածախս՝ 687.2 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 61.2 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 431.2 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին 194.8 հազ.դրամ,

- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 21556.6 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 117.2 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 33.3 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 21406.1 հազ.դրամ,

- ավելցուկ՝ 2791.5 հազ.դրամ, որը ենթակա է հաշվառումով վերաձևակերպման,

– պակասորդ՝ 34352.2 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 32810.3 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին 1541.9 հազ.դրամ,

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 109647.7 հազ.դրամ, համայնքային բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 6755.7 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 1840.6 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 253281.5 հազ.դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 371525.5 հազ.դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 228453.1 հազ.դրամ, որից՝ պետական բյուջե՝ 9981.3 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 903.8 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 299.9 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 217268.1 հազ.դրամ:

Ապառքի գումարները կազմում են 143072.4 հազ.դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 99666.4 հազ.դրամ, համայնքային բյուջեին՝ 5851.9 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 1540.7 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 36013.4 հազ.դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում ԱՀ քաղաքաշինության նախարարության, «Մերան» ՓԲԸ-ն, «Արաքսի գոտի» ՓԲԸ-ն, ԱՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի, «Քաշաթաղի շրջանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինություն» ՊՈԱԿ-ն, «Քաշաթաղի ջրամատակարարում» ՓԲԸ-ն, «Ա.Բունեթյանի անվան Քաշաթաղի ՇԲՄ» ՓԲԸ-ն և 4-րդ եռամսյակի վերջում ստուգմամբ հայտնաբերված գումարների ապառքներն են:

Նախորդ՝ տարիներում կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2019թ. պետական բյուջե է վերականգնվել/վերաձևակերպվել 10096.4 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 191.8 հազ.դրամ և ձեռնարկության հաշվին՝ 542.1 հազ.դրամ:

Ընդամենը 2019թ. պետական բյուջե է վերականգնվել 20077.7 հազ.դրամ, որից 2019թ. արդյունքներով 9981.3 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 10096.4 հազ.դրամ: 2019թ. համայնքային բյուջե է վերականգնվել 1095.6 հազ.դրամ, որից 2019թ. արդյունքներով 903.8 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 191.8 հազ.դրամ: 2019թ. ձեռնարկության հաշվին է վերականգնվել 842.0 հազ.դրամ, որից 2019թ. արդյունքներով 299.9 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 542.1 հազ.դրամ: 2019թ. արդյունքներով հաշվառումով վերաձևակերպված գումարները կազմել են 217268.1 հազ.դրամ:

ԱՀ իրավապահ մարմինների հետ համագործակցության շրջանակներում վերջիններիս պահանջով և առաջադրված հարցերի շրջանակներում ութ հիմնարկ-ձեռնարկություններում իրականացված ստուգման նյութերը ներկայացվել են ԱՀ ոստիկանություն, երկուսը՝ ԱՀ Գլխավոր դատախազություն և չորսը՝ ԱՀ Քննչական կոմիտե:

ԱՀ ֆինանսների նախարարության նախաձեռնությամբ իրականացված երկու ստուգման նյութերը ուղարկվել են ԱՀ Գլխավոր դատախազություն: